

Life777ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ
ՓՈՐՁԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲԻԼԼԸ

Ստորև իրավունքները հանդիսանում են յուրաքանչյուր այն անձի իրավունքները, որից խնդրվում է մասնակցել հետազոտական ուսումնասիրությանը: Որպես փորձի սուբյեկտ, ես ունեմ հետևյալ իրավունքները՝

- 1) Իմանալ, թե ուսումնասիրությունն ի՞նչ է փորձում հայտնաբերել:
- 2) Տեղեկանալ, թե ի՞նչ կպատահի ինձ և թե արդյոք բուժագործություններից, դեղերից կամ սարքերից որևէ մեկը տարբերվում է սովորական պրակտիկայում օգտագործվածից:
- 3) Տեղեկանալ այն բաների հաճախակի և/կամ կարևոր վտանգների, կողմնակի բարդությունների, կամ անհանգստությունների մասին, որոնք կպատահեն ինձ հետ հետազոտական նպատակներով:
- 4) Տեղեկանալ, թե արդյոք կարո՞ղ եմ որևէ օգուտ ակնկալել մասնակցելուց և, այդ դեպքում, ի՞նչ կարող է լինել այդ օգուտը:
- 5) Իմանալ իմ ունեցած այլ ընտրանքների մասին և թե ինչով դրանք կարող են ավելի լավը կամ վատը լինել՝ քան ուսումնասիրությանը մասնակցելը:
- 6) Ունենալ ուսումնասիրության մասին հարցեր տալու հնարավորություն՝ և՛ ներգրավվելու համաձայնություն տալուց առաջ, և՛ ուսումնասիրության ընթացքում:
- 7) Տեղեկանալ, թե ինչ տեսակի բժշկական բուժումներ են առկա՝ որևէ բարդություն առաջանալու դեպքում:
- 8) Բոլորովին մերժել մասնակցությունը կամ փոխել մասնակցության մասին իմ որոշումը՝ ուսումնասիրությունը սկսվելուց հետո: Այս որոշումը չի ազդելու իմ իրավունքի վրա՝ ստանալու այն խնամքը, որը կստանայի ուսումնասիրությանը չմասնակցելու դեպքում:
- 9) Ստանալ ստորագրված և թվագրված հավանության ձևաթղթի պատճենը:
- 10) Ազատ լինել որևէ ճնշումից՝ ուսումնասիրությանը մասնակցելու համաձայնության ցանկությունս քննարկելիս:

Եթե ունենամ ուրիշ հարցեր, ապա պետք է հարցնեմ հետազոտողին կամ հետազոտության օգնականին: Բացի դա, կարող եմ կապ հաստատել Մարդկային Հետազոտությունների Հանձնաժողովի հետ, որը զբաղվում է հետազոտական ծրագրերի կամավորականների պաշտանությամբ: Հանձնաժողովի գրասենյակ կարող եմ դիմել զանգահարելով (415) 476-1814 համարով, երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժ. 8:00-ից մինչև երեկոյան ժ. 5:00-ն, կամ գրելով՝ UCSF Human Research Protection Program, Box 0962, 3333 California St., Ste. 315, San Francisco, CA 94143: Թարգմանության մասին տեղեկության համար զանգահարեք (415) 476-1814 համարով:

Researchers: If using the [“short form” method](#) of consent, affirm the following and obtain the signatures below:

The elements of consent were presented orally on _____(date).

Subject Signature

Witness Signature